

ՀԱՍՑԷ

M. ARCHAM

Poste Res'tante

ATHENES [Grece]

Խմբագրութեան ուղղութեամբ նամակ
կամ այլ գրութիւնք ետ չ'են ղրկուիր:
Յօդուածներու պատշաճ դատաւածները
միայն պիտի հրատարակուին:

ՅԱԻԵԼՈՒԱԾ

ՄԻՈՒԹԻՒՆ

ԲԱԺՆԵԳԻՆ

Ամէն տեղերու համար գինն է
Տարեկան արծաթ ֆրանք 5
Վեց ամսուան » » 3
Բաժնեկիները կանխիկ վճարելի են:
Փոսթին ծախքը խմբագրութեան կը
պատկանի:
Ծանուցումներ կ'ընդունուին զիւ-
րամատչելի գներով:

Ա Մ Ս Ա Թ Ե Ր Թ Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Ա. ՏԱՐԻ

ԱՐԵՆՔ

1897

ՄԱՐՏ

Թի 6

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽՆԴԻՐԸ

ԵՒ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

Պարոն Հապուէր, Անգղիոյ Խոր-
հրդարանին արմատական պերճախօս
երեսփոխանը, Կրետական խնդրի առ-
թիւ խօսած ճառին մէջ, ըսաւ Սուլ-
թան Համիտին համար. «Այդ ապա-
կանուած շունը, որուն գոյութիւնը
արատ մըն է քաղաքակրթութեան հա-
մար:» Այս խօսքերը ամենարուսն
ժափահաւորութիւններով ընդունուե-
ցան խորհրդարանին կողմէ, որովհե-
տեւ ասկէ աւելի լաւ կերպով Պ.Հա-
պուէր չ'էր կրնար նկարել «Մեծ Մար-
գասպանը:»

Սակայն ինչ կը տեսնանք այսօր:
Ամբողջ եւրոպական դիւանագիտու-
թիւնը, որ այդ ապականուած շունը
կը պաշտպանէ ընդդէմ արի ժողովրդ-
րէ մը՝ ու Վիւլթաւսն Նախարարութեան
թեան դերը կատարելու համար մէջ-
տեղ կը նետուի և կ'ուզէ սատկեցը-
նել այդ կատաղած, այդ ապականուած
շունը: Մեր բերնին մէջ բաւական
թուք չի կայ այդ ստոր դիւանա-
գէտներու ճակտին նետելու համար:

Այդ «վեց մեծ պետութիւն» կոչ-
ուած ազդեցութեան մէջ ամէնէն
աւելի աչքի կը զարնէ Գերմանիոյ,
Ռուսիոյ և Ֆրանսայի կառավարու-
թիւններուն ընթացքը:

Շունները կը սիրուին երբ ան-
միասն, հաւատարիմ և սիրուն են
և ծառայութիւն կը մատուցանեն
մեզի: Բայց երբ շուն մը կը կատ-
ղի, կ'ապականի — Հապուէրի բա-
ռերով, — ինչպէս Սուլթան Համի-
տը, այլ ևս անկարելի է սլահել
զինքը: Այն ատեն պէտք է հար-
ուածով մը սատկեցնել զայն և չա-
րը վերջնիկ մէջ տեղէն: Ուրեմն ին-
չո՞ւ Սուլթան Համիտի պարագային
մէջ ընդհանուր կանոնէն չեղում մը
կը տեսնանք: Ահաւասիկ ասիկայ
կ'ուզենք բացատրել:

Գերմանիոյ կայսրը պաշտպան
հանդիսանալով Սուլթան Համիտին
պարզապէս կ'ուզէ հարուած մը տալ
ֆրանքո-ռուսական դաշնակցութեան:
Եւ ահա՛ ինչպէս: Գերմանիոյ կայս-
րը զիտէ որ Սուլթանը պաշտպանե-
լով նախ Յոյները պիտի գրգռէ և

յետոյ Թուրքերը քաջաբերէ, որով
փոխանակ գործը խաղաղութեամբ
կարգադրուելու և Կրետէն յոյներուն
անցնելու, պատերազմ պիտի ծագի
երկու պետութիւններու միջև և ու-
րուն անմիջական արդիւնքը պիտի
ըլլայ Թուրքիոյ տնտեսական կատար-
եալ փճացումը: Արդ, յայտնի է որ
Թուրքիոյ պետական պարտքին մեծա-
գոյն մասը ֆրանսայի դրամատէրնե-
րու պահանջները կը կազմեն, այն-
պէս որ Թուրքիոյ դրամական փճա-
ցումը և հանրային պարտքի վար-
չութեան բարձումը, որ բնական հե-
տեանքը պիտի ըլլայ Թուրքո-հելլե-
նական պատերազմի մը, սատակ
հարուած մը պիտի տայ Ֆրանսայի,
որ այլ ևս քիչ մը դժուար պիտի կը-
նայ դրամական օժանդակութիւններ
ընել Ռուսիոյ:

Իսկ Ռուսիա պաշտպան ցոյց կու-
տայ ինքզինք Թուրքիոյ և կ'ուզէ
Սուլթանը քաջաբերել իր վայրագ և
յիմար ընթացքին մէջ, որովհեաւ
այդ կերպով Թուրքիա կործանման
կը դիմէ հեռուէնէն և շատ կը դու-
րացնէ Ռուսիոյ Թուրքիայի ամբողջ-
լուծեան տիրելու խորհուրդները:

Գալով Ֆրանսայի, ինք ստորակ
աղախներ դարձած է Ռուսիոյ որուն
չահերուն կը ծառայէ, նայն իսկ ի վնաս
իրեն, յուսալով թէ՛ այդ կերպով օր
մը պիտի կրնայ Ալլաւ-Լոնէնը ձեռք
ձգել: Բայ աստի, Ֆրանսա, ինչպէս
վերը ըսինք, ամէնէն աւելի գանձե-
լիք դրամներ ունի Թուրքիայէն և
դրամատէրներու խմբակին գործին
չի դար Թուրքիոյ բաժանումը կամ
փոքրացումը, որ կրնայ պատճառ
ըլլալ իրենց պահանջներու փճացման:

Այս համառօտ տեսութիւնէն, ինչ-
պէս կ'երևայ, Արեւելեան խնդրի լուծ-
ման դժուարութիւնը Ֆրանսայէն ա-
ռաջ կուգայ, և Ֆրանսական կա-
ռավարութեան ընթացքը արդիւնքն է
ֆրանսացի դրամատէրներու իրենց
Թուրքիայէն ունեցած պահանջնե-
րուն: Եւ ահա քանի մը մեծ աւա-
ղակներու. — (մեծ դրամատէր ըսել
կ'ուզենք). — համար, ամբողջ ժողո-
ւորները այսօր կը ջարդուին, կը
կեղեքուին, կը չարջարուին անպո-
տիժ, ապականուած շան մը երեսէն:

Ըստ մեզ երկու միջոց կայ այս
փորձանքէն ազատելու, կամ սպա-
սել որ Թուրքիա կարող ըլլայ իւր
պարտքերը վճարելու և կամ ներքին

խռովութիւններ արծարծելով տրն-
տեսապէս բոլորովին կործանել զին-
քը որպէսզի պահանջատէրները իրենց
յայտը կտրելով, այլ ևս ճնշում չը բա-
նեցնեն իրենց կառավարութեան վրայ:
Առաջին միջոցը, պէտք չիկայ ապա-
ցուցանելու, անկարելի է: Թուրքիա՛
Սուլթանական որ և է վարչութեան
մը տակ չ'պիտի կրնայ իր պարտքը
հատուցանել և պիտի ստիպուինք
յաւիտեանապէս սպասել, իսկ երկ-
րորդ միջոցը շատ կարելի է և հա-
կական յեղափոխական շարժումները
արդէն այդ մասին մեծամեծ օգուտ-
ներ ունեցան: Կրնանք ըսել թէ ի-
րենց միակ օգուտը այս եղաւ. այ-
սինքն՝ Թուրքիոյ տնտեսական փճա-
ցումը փութացնել և ասով Արեւելե-
ան խնդրի լուծումն առաջ բերել:

Առ այս ամէնէն աւելի օգուտ-
կար եղան Պոլսոյ մէջ տեղի ունեցած
յեղափոխական ցոյցերը: Արդ այժմ
մէնէն պատեհ ժամանակն է վերա-
կրանք մեր ջանքերը: Նորանոր յու-
ղումներ, խառնակութիւններ պէտք
է առաջ բերել Կ. Պոլսոյ մէջ, Պէտք
է ամէն կարելի և անկարելի միջոց-
ներով Թուրքիոյ դրամական վարկը
ոչնչացնել: Պէտք է որ Քայաա, Պէ-
տէժ և Էտիկար Վիսսենթ չկրնան
իրենց չահատակութիւնները առաջ
տանիլ և Թուրքիոյ տնտեսական բար-
ւորումներու խոստումներով խաբել
դրամատէրները: Ահա՛ ինչ որ կը
յանձնարարենք մեր յեղափոխական-
ներուն, և թէ երբեք բան մը ընելու
միտք ունին:

Իսկ երբ, ըստ Գերմանիոյ կայ-
սր փափաքին, պատերազմ ծագի,
այն ատեն տնտեսական փճացումն
ինքնին առաջ պիտի գայ: Այդ պա-
րագային մեր միակ ջանքը պէտք է
ըլլայ անմիջապէս ապրտամբական
ընդհանուր շարժում մը առաջ բերել
Հայաստանի մէջ, որպէսզի Թուրք-
իոյ բաժանման ատեն մենք ալ ի-
րաւունք ունենանք մեր բաժինը
առնելու:

ՊԵՏՈՒԹԵԱՆՑ

ԱՆ ՀԱՄԱՋԱՅԻՆՈՒԹԻՒՆԸ

Եւրոպական դաշինքներու ան-
համաձայնութիւնը տակաւին կը շա-
րունակուի, հակառակ այն պաշտ-
ոնական զեկուցագրերու, զորս մեծ
պետութիւնները ուղղած էին Հելլէն

կառավարութեան, ստիպելով հե-
ռացնել Կրետէն Յունական զօր-
քերը և նաւատորմը: Գէթ այս
խնդրին մէջ զիրենք համաձայն հե-
ռազրի կըստաւանդին Յունաստա-
նի, որ՝ եթէ չը համակերպի իրենց
ծրագրի տրամադրութեանց, Պիրէ-
ոն, Վօլոս, Շիրա նաւահանգիստ-
ները և Ամպրաքիական ծովածոցը՝
պաշարելով պիտի կասեցնեն անոր
ներգործութիւնը, Եւրոպ. խաղաղու-
թիւնը պահպանելու համար:

Միևնոյն ժամանակ Ռուսիա՝
բացորոշապէս յայտարարեց թէ Յու-
նաստան եթէ տակաւին չարձակէ
իր յամառ ընթացքը, Թուրքիան
պաշտպանելով բնաջինջ պիտի բնէ
ամբողջ Յունաստանը:

Տէլիեանիի նախարարութիւնը,
յանդգնութեամբ պատասխանեց Տէ-
րութեանց վերջնագրին և Ռուսիոյ
սպառնալիքներուն, յայտարարելով
թէ՛ փոքրիկ Յունաստանի այս յան-
կարծակի շարժումն Եւրոպ. Պետու-
թեանց խաղաղութիւնը վերջովեւ
երբեք նպատակ չ'ունի, ինքն՝ աւե-
լի կը բաղձայ ընդհ. խաղաղութեան,
սակայն նկատելով Կրետէի անխա-
նական դրութիւնը, իր նիւթական
և բարոյական շահերը կը հարկադ-
րեն զինքը զինու զօրութեամբ մի-
ջամտել և կղզին հանդարտեցնել:

Պատասխանաբար մէջ կ'աւելցը-
նէ թէ՛ իր կառավարութիւնն եթէ
Եւրոպ. ճնշումներու տակ համոզ-
ուելով համակերպի, իր յուզեալ
ժողովուրդը Թուրքո-հելլենական
սահմանադրուի յարձակում ընելով
նորանոր խռովութիւններ պիտի յա-
րուցանէ, որը զսպելու համար թէ
կառավարութիւնն անկարող պիտի
ըլլայ և թէ աւելի վտանգ պիտի ըս-
պառնայ միջազգային խաղաղութեան:

Հելլէն կառավարութիւնը՝ այս
խորհրդաւոր պատասխանով բաց-
որոշապէս մերժեց Եւրոպայի առա-
ջարկը, և անկարելի պաշարուին
զերծ մնալու համար փութով զօրք
ապրամթելք՝ սահմանադրուի հա-
սուց, իսկ նաւատորմով չորս մասի
բաժնելով Յոնիական ծովու վրայ
շարժուն վիճակի մէջ գրաւ:

Յունաստանի քաղաքական այս
յանդուգն ընթացքն Եւրոպ. դիւա-
նագիտութիւնը դարձեալ և անոնց
առժամանակայ գոյացուցած հա-
մերախութիւնը բոլորովին փճացուց:

Գերմանիոյ թրքամուլ քաղաքա-
կանութեան՝ նախաձեռնութեամբ,
Ռուսիա՝ Յունաստանի դէմ բռնու-
թիւն բանեցնող ծրագիր մը պատ-
րաստելով առաջարկեց Մեծ-Տերու-
թեանց, Թուրքիայիսրութիւնը կան-
գուն պահելու համար գործնականա-
պէս չեղրբացնել Յունաստանը, Անգ-

Այս կանխատեսելով Մուրադիէֆի կեղծ խորհուրդները չընդունեց այդ ծրագիրն առարկելով թէ՛ Ռուսիա թուրքիան կը պաշտպանէ Արեւելեան խնդրի լուծումը յետաձգելու և անոր բարեկամութիւնը չափելու համար, որպէսզի աւելի դիւրութեամբ կարողանայ յաջողակեցիկ թուրքիայէն սպասելիք տեղերը : Անգլիա առաջ բերաւ իր նոր ծրագիրը, որով կ'առաջարկէ մինչև որ իրենց բանակցութիւնները լմնան և համաձայնին , արդէն Կրետէն պաշարման վիճակի մէջ է , իսկ սահմանադրութիւնը թէ թուրք և թէ յոյն զօրքերը իրենց բանակատեղէն 50 ական հազարամէթըր հեռի պահել : Անգլիոյ այս առաջարկին վրայ մինչև այսօր միւս պետութիւնները որոշում մը տուած չ'են :

Գերմանիա՝ մէկ կողմէն տեսնելով Ռուսիոյ ծրագրին ջուրը ինչպիսիք և միւս կողմէ լոնտոնի դիւանագիտական ակումբներու մէջ տիրած , հակառուս քաղաքականութիւնը ապագայ վտանգէն խոյս տալու և պատասխանատուութենէ զերծ մնալու համար նախընտրեց բոլորովին չէզոք դիրք բռնել Արեւելեան խնդրին մէջ, այս առթիւ՝ Գերման. երեսփոխանական ժողովը որոշեց խնդրել Կառավարութենէն որ Կրետէ գտնուող իր նաւատորմիդը յետ կոչէ , կառավարութիւնն այս առաջարկը ընդունելով առ այժմ ձեռնպահ կը մնայ :

Այս միջադէպերէն կրնանք հետեցնել թէ՛ առ այժմ Եւրոպայի անհամաձայնութիւնը կատարեալ է : Այս օրուան խնդրին ոչ Կրետական և ոչ ալ Հելլենո-թրքական , այլ՝ Արեւելեան խնդրին իր ամբողջութեամբ պարզուած և դարցած է Եւրոպական խնդիր , հետեւաբար մենք գտնէ այնպէս կը գուշակենք թէ՛ թուրքո-Հելլենական պատերազմը տեղի չի պիտի ունենայ , քանի որ մեծ տէրութիւնները պատերազմէ խոյս կուտան և խաղաղութիւն կը գոչեն : Իսկ եթէ հոս սահմանադրին վրայ հրացանածութիւնը սկսի և անմիջապէս միջադէպին դեպքանա-ժողով մը գումարտելով վտանգին առաջը չ'առնուի , այն ատեն Անգլո-Ռուսական կամ ընդհ. Եւրոպական պատերազմն անխուսափելի կը համարինք :

ԲՐԷՆՍ ԱՊՊԱՍ ՇՈՊԵՆՍԻՐ

և.

ԱՌԷՆՔԻ ՀԱՅԵՐԸ

Պոլսեցի դեղագործ Խաչիկ Սալքըմճեան անուն 28 տարեկան երիտասարդ մը 10 ամիս Զմիւռնիա մնալով Պէրսի կը մեկնի , ուր հասած պահուն համառօտ քննութենէ մը յետոյ անմիջապէս կը ձերբակալուի և թուրք ոստիկանի մը հսկողութեամբ Պոլիս գացող Արապական («Բրէնս-Ապպաս») շողեակը կը դրուի : Երբ Աղբրանդիա կը հասնի , տեղւոյն ազգայինները կարծելով թէ կարեւոր ամբաստանութեամբ ձերբակալուած կը դըրսկուի , մեծ ջանքեր ըրեր են ազատելու համար , բայց որովհետեւ չ'են յաջողած , մասնաւորապէս հայ հետեւորդ մը ընկերացուցեր են ամբաստանեալին , որպէսզի Պիրէոնի հայ դադթականութեան գործը իմացնելով ազատուի : Չանան : Միւսոյն ժամանակ յանձնարարական հեռագիր մ'ալ տուած են , որը ոտացուցեալ շողեակէն օր մը առաջ :

Տեղւոյս հայ երիտասարդութիւնը երբ լսեց եղբուրթիւնը չափազանց յուզուելով , առանց ժամանակ կորսնցնելու , հրացաններով , վեցհարուածեաններով և դաշոյններով դինուած մի քանի յոյներու հետ ընկերացած , երեկոյն ճամբայ կ'ան երգելով՝ կարծես պատերազմի կ'երթային . կէս գիշեր էր երբ հասան ի Պիրէոն , ուր միացան ուրիշ 20-30 հայերու հետ , ամբողջ գիշերը Հայկական սրճարանը անցուցին , և անհամբեր կ'ըսպասէին շողեակէն գալստեան :

Վերջապէս արշալոյսին շողեակը տեսնուեցաւ , ամբողջ հայերը և օդնական յոյները գաղտնապահութեամբ և վերջին ծայր խոհեմութեամբ 5 ական մարդ զանազան տեղերէ զետեղուեցան մի քանի նաւակներու մէջ և մտան շողեակէն մէջ , փրկուելով գտան հայը հսկող ոստիկանին քով հանդարտ նստած շողեակէն գետնայարկը : Այդ պահուն ոստիկանին առանց բան մը ըսելու վեր կ'ելլեն ազատելու միջոցները խորհելու , բայց նաւապետը և ոստիկանը հասկնալով անոնց նպատակը սահմանելու վեր կ'առնեն որ երկրորդ անգամ չ'կրնան վար իջնել : Մերիթինքէն սմանք տեսնելով յաջողութեան դժուարութիւնները իրենց օգնական յոյն երիտասարդներու հետ յանկարծ կը նետուին վար իսկոյն և կը յարձակին ոստիկանին վրայ , վեց հարուածեան մը և միւս մը դաշոյնը անոր կուրծքին դնելով կը սպառնան իսկ միւսները խլելով մարդը վեր կը հանեն , ապուշ ոստիկանը շուարած վախէն դոյնը փոխուած անշարժ կը մնայ : Մերոնք սանդուխէն նաւակ իջնելու ատեն , նաւաստիները յանկարծ սահմանելու ծովը ձգեցին այդ միջոցին ազատուող հայը և ուրիշ հայ երիտասարդ մը ծովը կ'իջնան :

Հետաքրքրաշարժ էր տեսնել այս վերջինը որ ծովու վրայ դաշոյնը ձեռք կեցցէ՝ Հայաստան գոչելով լողալով կ'առաջանար դէպի նաւակը : Այս յաջողութեամբ տանելէ յետոյ նաւակներու վրայ իրենց զէնքերը օգը պարպելով կեցցէի ազգականներով կը հասնին ցամաքը , ուր կը սպասէին բազմաթիւ հայեր և փախըտական Կրետացիներ , որոնք դինուած պատրաստ էին ի հարկին շողեակը պաշարել և կատարեալ խրուովութիւն մը յարուցանել , եթէ չի յաջողէին միւսները :

Տեսարանը խիստ փառաւոր էր 3-400 յոյն և հայ խառն մեծ ոգեւորութեամբ զուարթ դէմքով մատակայ Սուրբ Նիկողոս եկեղեցին մտան , ուր կրօնական պարտականութիւնը կատարելէ յետոյ յոյն մը տունը առաջնորդուեցան , հոն հետաքրքիր մարդոց գնացող եկեղեցիներու թիւը անհամար էր :

Հետեւեալ օրը տեղական մամուլը գովաւորով մանրամասնօրէն նկարագրեց միջոցառումը և թուրք դեսպանին գիմումը , որուն պատասխանը ոտոսկանութեան տեսուչը տուած էր թէ՛ քանի որ ցամաք ելած է , ազատ երկիր ըլլալուն համար չէ կարող յանձնել ամրացումեալը : Այսպէս խնդիրը վերջացաւ : Այս դէպքին մէջ նաւակ մը ըլլած և սակաւ ինչ մնասուած էր , գործակից յոյն մը ատրճանակը կորսուած էր և հայու մը մուծակները , կառքի են . զանազան ծախքերու գումարը հասած է 300 տրահմի (180

ֆր.) որուն կէսը Աթէնքի և Պիրէոնի միայն աղքատ դասակարգի մէջ հանգանակուած և վճարուած է , իսկ մնացեալ պակասը գումարը մի մասնաւոր նամակով պահանջուած է Եգիպտոսի ազգայիններէն :

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԵ

Թաթար Բաղարճըքի հայ փախուսականները հրապարակաւ իրենց շնորհակալութիւնները կը յայտնեն տեղւոյն նպաստամատոյ հայ յանձնաժողովին՝ որ ամէն ջանքեր չ'են խնայած իրենց բարեկեցութեան համար :

Վառնայէն կը գրեն մէկ թէ՛ Գում-գաբու փօլիս Մարգարը զարհուրելի տեսարանով՝ որ Պատրիարքարան ապաստանած և անկէ ձերբակալուելով ութն ու կէս ամիս բանտը մնացած էր , ընդհ. ներուժն յետոյ վառնայ գացած է , ուր ամիսէ ի վեր կը թափառի անպաշտպան : Այս տղան՝ որ յանուն Հնչակեան Կուսակցութեան գործած է , տեղւոյն մասնաճիւղը ոչ նիւթակաւ և ոչ բարդական օժանդակութիւն մը չէ ըրած եղբր :

Եւզոկիոյ կոտորածին վրայ մանրամասն տեղեկութիւններ թէ և կը պակսին , բայց թուրքիոյ Ս. քաղաքէն մեկ հասած գրութիւն մը կըսէ թէ՛ 150 հայ և 30 թուրք բանտուած են : Պոլսէն կըսեն 300 , Պատրիարքարանի տեղեկագիրը 700 , Անգլիականը՝ 500 և Գաղղիական տեղեկագիրը 900 ի կը հանէ . չգիտենք թէ որն է ստոյգ թիւը :

Պաշտօնապէս առնուած լուր մը կը հաստատէ թէ՛ այս անգամ թուրքերը առանց բացառութեան թէ՛ հռովմէականներ և թէ՛ յոյներ ջարդած են : Յայտնի է թէ՛ կոտորածը սարսափելի և զոհերու թիւը խիստ մեծ եղած է :

Այս առթիւ Գաղղիական և Անգլիական կառավարութիւնները Բ. Գրան Ժանուցեր են թէ՛ իրենց կողմէ մէկ մէկ հիւպատոսական պաշտօնեային պիտի զրկեն կոտորածի վայրը , որպէսզի թուրք կառավարութեան կողմէ զրկուած յանձնախմբին կատարած քննութիւնները և գործերը հսկեն :

Ռուս կառավարութիւնը Կովկասի սահմանին վրայ 60 հազար զօրք համախմբած , կ'ըսպասէ ամենաոգի շարժումի մը որ արշաւէ Հայաստանը : Թուրք կառավարութիւնը բողոքած է Ռուսիոյ այս ընթացքին դէմ :

Թէրք-Տաղի և Սեբաստիոյ մէջ նոր կոտորած եղեր է կըսուի , բայց մինչև այսօր պաշտօնապէս ստուգուած չ'է :

Սարաֆ Պաղտիկի որդի Մեղքոն վատ անձը , Պոլսոյ մէջ թրքացած և Ահմէտ անունը առած , շատ մը մասնութիւններ ընկնի յետոյ՝ Եգիպտոս զրկուած էր միւսոյն պաշտօնով , այս անգամ Պիրէոն հասած է Պոլիս երթալու համար Բարբաղդաբար Պիրէոնի ազգայինները ճանչնալով զինքը յաջողեր են բռնել և

լաւ ծեծ մը քաշելէն յետոյ ոստիկանութեան յանձնել , ուր նախապէս քննելով իր մատնութիւնը հաստատող մի քանի թուրք գտնուեր են , հոն ալ երկրորդ ծեծ մը ու եւրով զրկուած է Աթէնքի ոստիկանութեան դուռը , ուր՝ մինչև այսօր բանտարկուած կը մնայ :

Պառաւ կին մը իր զաւկին հետեւալ նամակը գրած է :

«... Հիմա հիւքիւմաթին սիւրկիւնով գաղղիներուն ալ թէղկէրէ կուտան , զոր ու խօլալութիւնով կելլէ նը սիրելիս եթէ քովը միւս ալ պատրաստ չունիս նը տեղաց մի պարտօք ստակ ճարես ու զրկես , մեկ մէկ օր էռէջ աս տեղացը դիւրս հանելուն իճապը նէլիս ... Հիմա մենք չորս քէմիլ մարդ ինք ու գիշեր ցորեկ քուրօջը քով ինք , անանկ ի քէն կինէ դօռը չի կրնար ելլեր , աղբիւրը չի կրնար երթար և փէնճէրէն չի կրնար ելլեր , սեպէ քի մափուս իմ արեր ճահլը , գերէ տեղիս վիճակը շատ գէշ է հէրքէ իր աղբին փակած ճահլը կու քաշէ զօռով , կու տանին իրենց շար կամքը կու կատարին ու քանի մի հարս ու աղջիկ ալ տարին և ետեւ ալ տաժկըցուցին ... ասուն , մէջ է իմանարենց Կարապետ աղային կնիկը ... մեկ ասկի ազատուելուն խօլայը նայիք ... դերէ հոս հայ չորպաճի չի մնաց ուր անունը լանք մեր ցաւերը ... տիւշմանը էմմէնը մեղցուց , հիւքիւմաթնալ մինչև ուր փոյ . չի խաղսնը պօշ բան է ... » :

ԱՆՏԻՏԱԽՐՈՍՅՈՒՆ

Մշեցի հայու մը դրած նամակը իր նոյնութեամբ կը հրապարակենք :

Սուրբ պատրիարք . Մեր մալ թաղեցին տարան , մեր մարդիկ ապաստանքի տղերիցին , միւս ճիճու պիժ մնացած երկիրներ տաճիկն էլ գացիր երկու տարվան վերկի կուզի , յուսաթի տի տան , դուք էլ ձեզի յէրընիդ կինտիլէք . որո՞ւ վէրէ կերթար իրանութէն էնէք , ավէրակներու վէրէ՞ որ մարդ չ'մնաց , էն ջրեր էմմէն խայու արուն դարցաւ . մէկ մէկ մօրուս թօրկեր էք , մէկ մէկ սև շոր հագեր էք , ձեր մրտքի մէջ ձեզի վարդապէտ մի կը կոչէք , բերիցէք զաստվառնջ նայէք խին վարդապետներու պատմութիւններ ու հիմակըման ձեր էրած մէկ ին . Սուրբ պատրիարք , դու քո ասդ չես տեսներ , Սուլթանի շորեր կը պաքլիս : Ղազէթաճի ախպէր էս նամակըս գրէ , թող հասկընան մեր յէրընիդներ :

ՄԵԵՅԻ ՄԸԼՈ

1821 ՄԱՐՏ 25

Ինչպէս յայտնի է Մարտ 25 ի օրը , Յունաստանի ազատութեան դրօշը պարզուած նուիրական տօնն է , որուն 76 ըր տարեդարձը փառաւորապէս տօնեցին այս տարի : Ամբողջ տունները և խանութները դրօշակներով և յեղափոխական հերոսներու պատկերներով զարդարուած էին :

Առաւօտեան ժամը 10ն էր , Պալատէն մինչև Միթրոպօլիս ըսուած Մայր եկեղեցին մեծ պողոտային վրայ գինուորական դօտի մը կաղ-